

ՊՈՒԿԱՐԻԱ

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

Տարեկան 8 Ձր.
Վեցամսեայ 4 Ձր.

ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆ


Տարեկան 10 Ձր.
Վեցամսեայ 5 Ձր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. Տօլ.
Վեցամսեայ 1. Տօլ.

Կ Ա Ն Ի Կ

ԾԱՆՈՒԾՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵՐ.



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ե. Ի. Բ. Ա. Գ. Ա. Կ. Ա. Ն.

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

ՀԱՍՏԷ
Rédaction du Journal
«Travounk»
Varna
ГЕДЕЖИЦИЯ НА
ВѢСТНИКЪ
«ПРАВУНИКЪ»
Варна

Դրոշմիչիք եւս չեւս
տրոշիք

ԳՈՐԾ՝ ՓԱԽԱՆ ՆՊԱՍՏԻ

Մեր ներկայ թուով կը հրա-
տարակենք Պոլսոյ Աշխատանքի
Տունն անուն կազմակերպութեան
մէկ կողմը:

Անոր որդեգրած նպատակը
1896ի գաղթականութեան հո-
սանքի տեսնէն մեր շտապով-
ած սկզբունքն է. Այն է աղքատը
կամարկածեալը փոխանակ ձեռք
բանալու, մուրալու վարժեցնելու,
ինչ որ ստորնացուցիչ է, անոր
գործ տալ, որով վարժեցնել իր
աշխատութեան արդիւնքովը,
ճակատաբաց, վեհանձնօրէն ապ-
րելու:

Ինչպէս որ այդ սկզբունքը
նորութիւն մը չէ, զանի գործ
նական հողի վրայ զննելու ձեռ-
նարկն ալ նորութիւն մը չէ,
քանի որ թէ Ազգ. Պատրիարքա-
րանը թէ առաջնորդարանները,
թէ Գահիրէի Հ. Բ. Ընդհ. Միու-
թիւնը եւ թէ արիւնջ բարենպա-
տակ հաստատութիւններ այդ
ուղղութեամբ գործել սկսած են
արդէն. զանազան տեղեր արհես-
տանոցներ եւ աշխատանոցներ
հաստատել տալով կամ աղքատ
արհեստաւորներու գործիք եւ
հում նիւթ հայթայթելով:

Մենք համակրանք կողջունենք
այդ նորակազմ Աշխատանքի Տու-
նին երեւումը, գտնելով անոր
որդեգրած նպատակը մեր ի վա-
ղուց փայփայած սկզբունքին հա-
մապատասխան. Բայց մեր կողմէ
զայն արտասահմանի հայութեան
յանձնարարիկէ առաջ, մեզ պար-
տաւորութիւն կը սկսեցնէր պարզ-
տելու հասկնալ թէ այդ կազմա-
կէ, պոլիթիկն ո՞ր աստիճան վըս-
տ հելի ձեռքբերու մէջ կը գըտ-
նու. Ազգային իշխանութեան եւ
անոր համարառութեան կամ հա-
կակալին ենթարկուած է. Այս
կարեւոր կէտերը մեզ մութ են
դեռ. վասն զի տակաւին մեզ չէ
հասած ընկերութեան կանոնադ-
րութիւնը, ոչ ալ յստակ տղիւր-
ներէ բղիթած յանձնարարութիւն-
ներ կարգացած ենք ա՛ն ու մա-
սին. Հետեւապէս մենք մեզ ի-
րաւունք կուտանք վերապահու-

թեամբ վերաբերուելու դէպի
այդ Աշխատանքի Տունը, եւ յանձ-
նարարելու անոր վարիչներուն
որ զայն դնեն Ազգ. Պատրիար-
քարանի վերին հսկողութեան
տակ—եթէ ցարդ չեն դրած— եւ
զերծ կացուցանեն կուսակցական
հոսանքներէ:

Առ այժմ այսչափ միայն
Յ. Պարպիք

ԲՕԼՕՆԻԱ (')

Արեգակին ծագած կողմէն, եր-
կարագոյն օրերու մէջ բազմու-
թիւն մը կը տեսնէի ցրուած կա-
նաչագեղ եւ հարուստ երկրի մը
վրայ. Եւ ամենուրեք որ աչքս
դաւնէի, մի միայն կը հանդի-
պէի տխուր ճակատներու, անժը-
պիտ չրթանց, համր բերան,
ներու, տակաւին հպարտ աչերու
ուսկից գաղտագողի արցունքներ
կը սպրդէին, զորս գողցես զսպել
կը ջանային, վասն զի հոն այս
մեծ աւերածին այս սաստկագոյն
վիշտին միջեւ զինեալ մարդիկ
կային որք տանջանաց պատրու-
ակ մը կը լրտեսէին, քանզի ար-
ցունքերն ալ անողորմաբար պատ-
ժաւելու արժանի ոճիրներ էին:

Եւ ես ինձ կը հարցնէի թէ ի՞նչ
է այս:

Եւ ինձ ըսին—Մարտիրոս ժողո-
վուրդ մ'է սա, սուրբ խորհուրդ
մը կը կատարուի ի նա:

Ժամանակի մը համար չարին
իշխանութեան յանձնուեցաւ, որ-
պէս զի իւր տանջանաց մէջ
թրծուելով, ինչպէս երկաթն հե-
ղեղի ջուրին մէջ, սուր դառնայ
մարդկութեան չար ոգին յաղ-
թահարող:

Դժոխային ցոփ չուստանքն
այս արեւնթաթաւերկրին վրայ
պարեց, ուր անձնուր սիրտ իր
չարչարանքն ունի, անձնուր մկա-
նուք իր ցաւալի կծկումն ու
կարկամումն ունի եւ հարկ ի
վերայ կայր, որպէս զի ուխտարհ
գիտնար թէ ի՞նչ է հայրենիքն

(') Եմք, ձիւղ Հայաստանի այսօր-
ուան պատկերը կը խոսցնէ իր մէջ:

եւ հայրենեաց կորուստը, որպէս
զի արդարութիւնն, իրաւանց
յարգանքն, հայրենի սէրը, բու-
նաւորներու սարսափը կազմէին
ժողովրդոյ ապագայ կապը եւ ա-
պագային մէջ իրենց փրկութիւն
հաստատէին:

Հիմա զոհն հոն է որ սրտա-
թունդ կը տրոփէ սատանի պաշ-
տօնէից դանակին տակ. բայց
Աստուած անոնց յանձնած չէ
զայն յաւիտեան:

Երբ իրեն յայտնի ժամն հնչէ,
սոսկալի կերպով ռոք պիտի ելնէ
իրեւ գերագոյն վրէժխնդրու-
թիւն եւ իր խորտակող եղիւթ-
ներուն շունդէն զարթնելով յու-
զուած ազգերը պիտի աղաղակեն,
—Օհնեա՛ր, յաւեա՛ր օրհնեա՛լ
իւնի այն ազգը որ հաստատա-
մտութեամբ չարչարուելով ամեն
ժողովրդոց համար արժանի դա-
տուեցաւ յաղթահարելու:

Լաւրճէ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ս. Պատրիարքը շարաթէ մը
ի վեր յայնորդաբար նախարարաց
փոխադարձ այցելութիւնները
կընդունին. նախարարք, ըստ թր-
քական վաղեմի սովորութեան,
տարտած խոստումներ կը կրկնեն,
առանց սակայն գործադրութեան
նմոյշը սոյն տալու:

—Երուսաղէմի 3 ըմբոստ վար-
դապետները Պոլիս բերուած եւ
Ազգ. հիւանդանոցին մէջ մասնա-
ւոր տեղ մը առանձնացուցուած
են, արտաքին հաղորդակցութենէ
զկելով առ այժմ. Անոնց գոյ-
քերը կնքոյ տակ առնուած են
քննելու համար:

Տեղապահ Տէր Դանիէլ վրդ.
միաբաններէն առժամանակեայ
վարչակոն խառն մարմին մը
կողմէր է երուսաղէմայ մէջ:

—Ռուսներոյ եւ Պուլկարիոյ հո-
գեւոր հովիւ Նշանակուած Տէր
Դրիգորիս վարդ. Պալագեանի
ուղեւորութիւնը յետաձգուած է
մինչեւ որ իր պաշտօնը ճանչցուի:

Ռուսան կառավարութենէն ասոր
համար Բ. Դրան միջամտութեան
գիծուած է, վասն զի տակէ առաջ
կրկին թուրք կառավարութեան
թելադրութեամբն էր որ Ռու-
սանիոյ կառավարութիւնը կը
մերժէր Հայ վեղարաւոր ընդու-
նել իր սահմանէն ներս:

—Թուրքիոյ ներքին գործոց
նախարարը դրած է պետական
խորհուրդին որ հին ունեւոր ա-
տեն իբր մաւնոյ Հայերէ գրաւ-
ուած եւ իսլամ գաղթականներուն
տրուած հողերը կրկին իրենց
տէրերուն վերադարձուն:

—Նիւ Եօքքի մէջ «Հայոց ն-
պաստամատոյց ընկերութիւն» մը
կողմուած է ամերիկացի անձնա-
ւորութիւններէ բաղկացած. Ըն-
կերութեան նախագահն է Նիւ-
Եօքքի Անգլիական եկեղեցւոյ ե-
պիսկոպոս Կրիլըր. Այս գործին
նախաձեռնութիւնը կը պարտինք
Տ. Հրանտ Մ. Քերիշճեանի որ
ընդհանուր քարտուզարն է նոյն
ընկերութեան, իսկ զանապահն է
Պրաուն Եղբ. եւ Ընկ. աշխարհա-
մանօթ դրամատուր. Ընկերու-
թիւնը կոչ մը ուղղած է Ամերի-
կայի բարեսէրներուն օգնելու
համար Կիլիկիոյ 60'000 հայ
արկածեալ որբերուն եւ այրիներ-
ուն. Ընկերութիւնը կարգադ-
րած է որ Հայ երիտասարդներու
Օժանդակ Թանձնախումբ մը հո-
գայ ընկերութեան պաշտօնաւորանի
եւ դիմումներու համար պէտք
եղած բոլոր ծախսերը, այնպէս որ
Կիլիկիայի հաւար նուիրուած ամ-
բողջ գումարը առանց սենթ մը
զեղչելու զրկուի ուղղիկ հայ կա-
րօտեալներուն:

—Տեղւոյս Ազգ. վարժարանի
ի նպաստ տարեկան պարահան-
դէսը տեղի պիտի ունենայ ամ-
սոյս 20 ին «Արօշէք» սրահին մէջ,
Տոմսերու մէկ կարեւոր մասը հայ
վաճառականաց ձեռամբ վաճա-
ռուեցաւ օտարազգի անձնաւորու-
թեանց:

—Սիլիստրէ. ձերբակալուած
նալպանտեանը տեղւոյն բանտին
մէջ կը մնայ տակաւին. իր ստո-
րագրութեան տակ յայտարարած
է թէ Տէր Սարգիսը անմեղ է
եւ ինք երկու նամակ գրած էր Ամե-
րիկեան կառավարութեան թէ
ինքը Սիլիստրէ կը գտնուի:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

ԱՌԱՋԻՆ և ՎԵՐՋԻՆ ՊԱՏԱՌԻԱՆՈ

ՊԱՐՈՆ Ս. ԳԱՆԱՐԵԱՆԻՆ

Երևանում լայն խիտ արգա-
րացի գիտողութիւններէն զոր ուղ-
ղած էին հրապարակաւ իրեն թա-
գահանութեան եւ յարգելի
անգամներն Տեառք պաշտօնհամ կա-
րապետեան և կարա «սէն Աճէմեան»
ի պատասխանի Ս. Գանարեան նա-
խատինքներու և խեղաթիւրում-
ներու տարալին տակ իւր սրբ-
տին մէջ կուտակած ֆամուղ ժահ-
ը թափած է իմ վրայ, ձեր պատ-
ուական լրագրոյ վերջին թուոյն
մէջ:

Թէպէտեւ ինձ համար շատ
գիւրիւն էր իւր նախատանաց
նախատինքներով պատասխանելու
այժմ միայն կը գոհանամ զանանք
ամբողջովին իրեն վերադարձնել
որոնց պէտք ունի և թերեւ կըր-
նայ ալ ունենալ: Բարոյականի
սնանկութիւն հրատարակելու մը-
տադրութիւն չ'ունիմ:

Պարոնը կ'ըսէ թէ գանձապե-
տութեան պաշտօնը չիմ' ուզեր
եղեր թողուլ, թէ կը շահագոր-
ծեմ էգեր Ազգ. Սնանկը, թէ
տէր և իշխան դարձեր եմ ինձ
յանձնուած պաշտօնին մէջ, և այլն:
Ո՞վ ըսաւ Ձեզ թէ այդ պաշտօնը
բունի իմ վրայ պահած եմ և չ'եմ
ուղած յանձնել զայն վայրկեանա-
պէս: Եղբայրս ապուշ կարծեցի՞ք
անցելոյն մէջ պաշտօնավարող
թաղականութեան անդամներն,
որոնց մէջ ինձ և ձեզմէ շատ
ու շատ աւելի նրբամիտներն ու
հաշուագէտներն կային, յանձնէին
ինձ այդ պաշտօնը իրենք միայն
պարզ հանդիսատեսներ ըլլալով
գանձաւորներուն և վճարուածնե-
րուն: Երբեք ամենքն ալ ընկա-
լագրոց փոխան եղած են, և ա-
նոնց բուններն խնամօք պահուած
են: Բաւական էր ինձ մի առ մի
քննել և տեսնել զանոնք: Գտա՞ք
միթէ ձեր թաղականութեան շր-
ջանին մէջ իմ շահագործութեանս
մի ամենավոր օրինակն եթէ
գտաք, է՞ր լսեցիք և չի բողոքե-
ցիք ինձ դէմ: Իսկ եթէ չի գը-
տաք, է՞ր կը զրպարտէք: Իսկ թէ
տէր և իշխան դարձեր եմ հոն,
յոթարկամ կը բաղձամ որ օր մը
դուք հասնիք ճշմարտի իշխանա-
վայել բարձրութեան մը որուն
այնքան արժանի էք Վառնայի
մէջ ձեր անգիրտ հանճարով...:

Խաբեբայութիւն կը համարիք
թիւրքիա մեկնող ազգայնոց տըր-
ուած վկայագրոց տակ (Սէքուէ-
թէր) քարտուղար ստորագրելու
համար: Այո, պարոն, նախկին
թաղական խորհրդոյ գիտակցու-
թեամբ ու հաւանութեամբ, առ
ի դիւրնաբիւ մեկնող քաղաքի
ազգայնոց, աչքատ ըլլալին հաս-
տատող վկայագրները ստորա-
գրած եմ: Զի անցագիր ստանա

լու համար, և եթէ մեկնողներէն
ոմանք ալ յանուն Ազգին նուէր
տուած են: Իոխան ընկալագրոց
օրը օրին արձանագրած եմ հաշ-
ուետուարաց մէջ, բայց դուք որ
քաջ ֆրանսագէտի (?) համար ալ
ունիք, գիտնալու էիք Սէքուէթէ-
բառին ճիշդ նշանակութիւնը և
թէ մինչ ո՞ր կը յանգի սէքսթէթէ-
եղողի մը պաշտօնին իրաւասու-
թիւնը:

Բայց ձեր խեղաթիւրումներու
գերադրական աստիճանին հասած
չէ՞ք ըլլալ՝ երբ կ'ըսէք թէ կա-
ռավարական պաշտօնատուն մը
խաբած եմ եղեր դրամ գանձելու
նպատակաւ: Երբ անցեալ տարի
աղջկանց վարժարանին տարեկան
մնացորդ վարձքը գանձելու պայ-
մանանժամը անցած էր, վարձքի
պայմանագիրը ստորագրող Արթ-
Տէր Մարտիրոս հօր և թաղական
խորհրդոյ անդամ պարոն Մինաս
Առաքելեանի կրկնակ խնդրանաց
վայ ընկերացած եմ մինչ օրոք
պաշտօնատունը, և հոն Տէր հայ-
ըր և պարոն Առաքելեան զիս
նեղակայացուած ոչ թէ թաղական
խորհրդոյ մէկ անդամը, այլ քա-
տուղար նոյն խորհրդոյ, Հարցու-
ցէք այդ երկու կենդանի վկա-
ներուն, վստահ եղէք թէ չ'են
կեղծեր ճշմարտութիւնը, իսկ
եթէ անոնց վկայութեանց ալ
հաւատ չ'ընծայէք, կրնաք ուղ-
ղակի դիմել կառավարութեան
նօտարին արձանագրութեանց, և
դուք բաւական պարզամիտ ըլլա-
լու էք հաւատարու թէ կարելի
է եղեր կառավարական պաշտ-
նատուն մը խաբել և յետոյ ար-
ձակ համարձակ պատիւ քաղաքին
մէջ: Չ'ստանամ ըսել թէ երեք օր
վերջ տէր Մարտիրոսը գանձեց
վարձքի գումարը և ատու վճար-
ուեցան պաշտօնէից ամսական-
ները:

Բայց եկու տես որ ձեր այդ
ստախոս հրատարակութեամբ ոչ
միայն զիս կը զրպարտէք, այլ
կ'անպատուէք նաեւ ձերունի քա-
հանայ մը և թաղական խորհրդոյ
ալ պարկեշտ մի անդամը Ամթ
է:

Իցի՜ թէ մի օր զղշացած չըլ-
լայիք այդ պէս գրեցնուդ համար
և նորոք մէն մի տողը յաւիտե-
ական նախատինք մը չ'ըլլար
ձեր ճակտին...:

Դր. Սիմոնեան

2 փետրուար 1910

Վառնա

ՀԱՐԿԵՑՈՒՑԻՉ ՊԱՏԱՌԻԱՆ ՄԸ

Յաւանդութիւն, խեղաթիւ-
րում և սին սնապարծութիւն—ա-
հա՛ հոգիին այն երկար յողու-
ծին, զոր Տ. Ս. Գանարեան ուղ-
ղած է «բաց նամակ» վերտառու-
թեամբ Վառնայի հայութեան:
Մեզ համար անորոշելի չ'է եր-
կար բարակ թերթի սինակաները
լեցնելը զուրկ ցաւցնելու աստի-

ճան շաղիաղութիւններ ընել
Պ. յողուածագրին նման, այլ պի-
տի պատասխանք այն կէտերուն
որոնց Պ. ը տարբեր դարձուածք
ներով, ի՞նչուր կը ջանայ ինքզին-
քը արգարացնել: Միևնոյն ատեն
անգիտակցօրէն խոստովանելով
իր ինքնագլուխ ըրած կարգա-
դրութիւններն, ինչպէս որ կը
ճանչնայ իւր քսոց—նամակին եր-
կորդ սինական մէջ ըսելով թէ
«Այդ թերութիւնները եթէ իս-
կապէս կան, հաւանականաբար
անոնք եղած են դպրոցական տա-
րեշնչանի սկիզբները» և ըստ նո-
րա գրուածքին, մեք պէտք է
եղեր մեր հրաժարականը ոչ թէ
չորս ուկէս ամիս ետքը տար ալ,
անմիջապէս—Պ. Գանարեան եթէ
ընդունինք ձեր այդ պատճառա-
բանութիւնները, ա՛յն ատեն ըս-
տիպուած պիտի ըլլայինք նոյն
չորսուկէս ամսուան մէջ ձեր բաղ-
մաթիւ ինքնագլուխ և ապօրինի
կարգադրութեանց մէկ մէկ հլ-
րաժարականներ լրկելու որովհետեւ
ինչպէս որ ձեզ ալ յայտնի է, ձեր
այդ քաջահաճ կարգադրութիւննե-
րուն ամէնքը մէկ ամսուան մէջ
կատարուած չեն, այլ տարբեր
տարբեր ժամանակներու մէջ:
Մենք միշտ ձեզ դիտել տալով
հանգեւրձ՝ կը ջանայինք որ Ազ-
գին վրաս մը պատճառելու տեղի
չ'տանք ու եւ կերպով:

Կըսէք թէ՛ ձեր ինքնագլուխ
կազմագրութիւնները մեր որո-
շումներով եղած են: Ես կէտը
մեզ շատ դարձանալի կը թուի,
որովհետեւ ոչ թէ մեր որոշումնե-
րով այլ մեր միւս պաշտօնակից-
ներու հաւանութեամբ ալ որոշ-
ուած չեն: Ինչպէս որ ասիկա կը
ապացուցուի ձեր իսկ ստորագրու-
թեան տակ գտնուած արձանա-
գրութեանց մէջ: Ըսել է դուք
ոչ թէ բացէ ի բաց կը խեղաթիւ-
րէք ճշմարտութիւնը, այլ բացո-
րոշապէս կը ստէք, ասկէ ի պատ,
դուք մեր պաշտօնակիցներուն
առջեւ ալ խոստովանած էք ձեր
սխալ կարգադրութիւնները, իսկ
երբ կըսէք թէ մենք ազգասի-
րութեան քողին տակ «ռէքլամ»
կ'ընենք ինքզինքնիս, ճակատա-
բաց կը յայտարարենք: մենք այդ
տեսակի դիտումներ չունինք, ա-
տու զուր անխիղճօրէն մեզ կը
զրպարտէք:

Դուք ինքնին կը խոստովանիք
թէ, կը իրաւափիւր եղեր ինքն-
գողին միտքը անտեղիօրէն զբա-
ղեցընելէ՛ եթէ դուք յիրաւի
անմեղ ըլլայիք, կրնայիք երկու
տողով ձեր անկեղծութիւնը ապա-
ցուցանել: Բնականաբար ձեր տաղ
տըկալի յօդուածով ըրած շաղա-
կրատութեամբ ընթերցողին միտ-
քը պտտելու:

Ձեր զրո ամբողջ միջնա զարդ
եկող գացող թաղականութիւն-
ները կանպատուէք անոնց ալա-
թոքաւ դրութիւն ունենալուն
համար, և միմիայն դուք կը գըտ-

նուիր եղեր «ալաթութեան», ալա-
թիւնկային ձգտող չընող անձ-
նաւորութիւնը... ո՛հ, որքան
հազուկաւատ տաղանդ...:

Ատենապետութիւնը ձեռն և
գանձապետութիւնը ընդունելը
ոչ թէ ձեր կամօքն պիտի ըլլար,
այլ տեսնելով ձեր ինքնագլուխ
կարգադրութեանց չափազանցու-
թիւնները պարտաւանքի (պրիւս)
պիտի ենթարկուէք ձեր պաշտ-
նակիցներու կողմանէ, և գոհա-
ցում տալու համար ձեր փառա-
մուրթեան, այնպէս կարծիք մը
կը դառնար անգամաց մէջ, ո՛ր-
պէսզի ձեզ չ'ենթարկէ պարզ
անդամի աստիճանին, այլ գան-
ձապետի:

Պարզապէս կը ստէք, թէ հրա-
ժարականը ստորագրող և, Աճէմ-
եան ալմուղ իր պերճախօսու-
թիւնը թափած է ձեզ համոզելու
համար որ պաշտօնէ չ'քաջուիք
Աճէմեանէ եր առաջին դիմագրողը
ձեր ալաթիւնկա (1) կարգադրու-
թեանց, որոնց մասին քանի քա-
նի անգամներ, անդամակիցներուս
առաջարկած եմ ձեզ պիտի
(պարտաւել) ընելու: Նոյն իսկ ման-
կապարտիզպան հի Օլիորդին
անկարողութիւնը Ձեր աչքին խո-
թելով, մի միայն ես էի ձեզ
յոթգիմանողը որպէսզի ժամանակ
չանցած հարկ եղածը կարգա-
դրուի թէ՛ անոր անկարողու-
թեան և թէ տարեթողի մասին,
և որ դուք, ամբողջ անդամաց առ-
ջեւ ձեռքերնից սեղանին զարնե-
լով, անխիղճօրէն յա՛ղդնեցաք
աղաղակել: Այս ատենապետ եմ,
հետեւաբար ամենէն աւելի իրաւ-
ունք ունի, ձեզնէ աւելի ազդե-
ցութիւն ունենալ, ապա թէ ոչ,
հրաժարականս կուտամ, և ձեր
այս անխիղճ յատարարութեանց
վրայ անդամակից Պ. Արարհամ
կարապետեան ձեզ իրաւացիօրէն
դիտել տուաւ որ ամէնքս ալ հա-
ւասար իրաւունք ունինք և թէ
դուք մեր քուէով ընտրուած ա-
տենապետ մըն էք, այս առթիւ
դիտել կը տրուի ձեզ թէ կ, Աճէմ-
եան երբեք պերճախօս եղած չէ,
որչի՞ք դուք հայկաբան, ալա-
թիւնկա, ճարտասան:

Գիտով ձեր գործածած չաքն-
դը բառին, մօտ տարիներս այդ
բառին անունը անդամ լսած
չենք... և մեք ձեզ նման ան-
խիղճ եղած չենք Ազգային ու-
սուցիչներէն մի քանին գրեթէ
ամէն երեկոյ ձեր խանութի հա-
ւաքելով, ազգային չաքնթըն
ամէնէն տաքցած միջոցին, տա-
րեթողակի յաւելում ընէք ուսու-
ցչի մը տարեթողական վրայ ա-
ռանց այդ մասին մեր գիտակ-
ցութեան, ոչ իսկ արձա՛ագրու-
թեանց մէջ յիշատակուած ըլլալով
և ոչ ալ ուսուցչին կողմանէ եղած
գրաւոր դիմումով: Ահա մեր
վերջին պատասխանը: Եթէ եր-
բէք յանդգնիք երկրորդ անգամ

